10.— Աղօթագիրք, ընդօրինակուած Երուսաղէմի Ս. Յարութեան տաճարին մէջ, ի Թուականութեանս Հայոց ՌՃՁԹ (=1740 Յունվարի ե.) (ՄՁ. թ. 1720)։

11.— Կարգ եւ կանոն Աղօթից եւ հաստուածեւեր Նարեկի և Աւետարանի. «Գրեցաւ ի քաղաքն Երուսաղեմ, ի մէջ Ս. Յարութեան տաճարին ի Թուականութեանս մեր ՌՃՂԴ (=1745) (ՄՁ. թ. 1347)։

12.— Առաքինութեանց Գիրք Արիստոտէլի. որ կը պարունակէ նաև քարոզ մի ի Գեորգ վրդ. ի Յերուսաղեմ, անհմուտ գրչութեամբ. (Էջմ. Ցուց. թ. 54 էջ 4)։

13.— Մեկն. Աւետարանին Յովհ. ընդօրինակուած ի Ս. Երուսաղեմ. «ունի զքանի մը ճառս, զկանոնս, զխրատ և զբանս պիտանիս, զմեկնութիւն Ս. Պատարագին և զյիշատակարան» (Էջմ. Ցուց. թ. 1430 էջ 159)։

14.— Նարեկ գրեալ Յերուսաղեմ, (Թերի) (Էջմ. Ցուց. թ. 1525 էջ 173)։

15.— Քերականութիւն, Բառարան, գրեալ ի քաղաքն Երուսաղեմ, կը բովանդակէ ԺԵ. այլ և այլ ճառեր. (Էջմ. Ցուց.) թ. 2237, էջ 229-30)։

16.— Վարդան վրդ. Մարաթացւոյն և Յովհաննէս Գառնեցւոյն աղօթքները և այլ ճառեր կը պարունակէ այս ձեռագիրը որ ընդօրինակուած է ի Ս. Յակոբ. (ՄՁ. թ. 1485)։

17.— Կիւմիւշխանէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մատենադարանին (թ. 7) ձեռ. Աւետարանին յիշատակարանին մէջ կը կարդանք հետեւեալը. «Գրեալ եղև սա ի սուրբ քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ սուրբ առաքելական աթոռոյս, ուր հանգուցեալ կայ գլուխ աստուածարեալ Ս. Առաքելոյ Յակոբայ որդւոյն Զեբեդեայ...» (Արարատ, 1905, էջ 724)։

18.— Մանուկ Աւետարան, ընդօրինակուած ի Լիմ. ՌՄԾԱ (=1802) կրիչ Կարապետ քհ. որ կուտայ այս ծանօթութիւնը. «եւ գտի զօրինակ սրբոյ աւետարանիս, որ գրեալ էր ի սբ. քաղաքն Երուսաղեմ, ի մէջ սբ. Յարութեան»։ (C. G. թ. 5460, էջ, 230)։

ԱՆԴՐԷԱՍ ԱԲ. ՊԱՐՈՆԵԱՆ, ՁԱՎԿԱՐԱՅԻ. — Ծ. 1862, աւազանի անունը Յակոբ. աշկ. տեղւոյն Ազգ. Վարժարանին, զոր-